

Վ Ա Ր Դ Ա Ն Ի Ս Ի Ր Տ Ը

3

Տօն էր լոյսի,
 Ու դպիրներ հաւատեռանդ,
 Թարգմանիչներ,
 Ուսուցանող ակումբներ,
 Կառնդէին ցորենն ոսկի,
 Դիրք կախարդ,
 Կոյս միսֆերուն հայ աշխարհին:

Շարժէր հզօր,
 Սիրին վրայ մեր սուրբ հողին,
 Առունքում նրման զուարթ,
 Կը վազէին,
 Մասաղեքում ու ժամիս
 Մանուկներ բիր,
 Նոր զարունին,
 Հանդերձելու միսֆը հայուն
 Անպաստապար,
 Մեծ բարիքէն նոր օրերու:

Ձեռք մ'Հեբիւլեան,
 Լուսապայծառ,
 Խաւարին դէմ խաբարեւէն,
 Կը դարձնէր անա նորէն
 Անխն անհուն
 Հակասագրին մեր դարերուն:
 Հոփնչին հեռ աչք զարթուցիչ,
 Կ'արքննային,
 Մեծ քմբիրէն ժամանակին,
 Բիր հոգիներ,
 Աշխարհ մ'ամբողջ,
 Կողկողագին մութէն դէպի
 Լոյսը վազող:

Շարժէր հրզօր,
 Եւ օտարին խեցքեկ ու խուժ
 Բարբառին տեղ,
 Կը լուէր քաղցր ու ներդաւնակ
 Խօսքը հայուն,

Հողին վրայ մեր արեգչեր,
 Իբրեւ լոսած քնար սօսեաց,
 Կախուած հովի
 Սահանքին դէմ:

Փեքակներու նրման անդու,
 Դպրոցներ բիր,
 Մեղրն հանդերձող սերունդներուն,
 Լոյս հայրապետ
 Մութ դարերուն,
 Կամարն որոնց ծիածանին,
 Պիտի ձգուէր,
 Համբուն վրայ մեր պատմութեան,
 Այսօր ու վաղ
 Եւ յաւիտեան:

Մանուկն Վարդան
 Աստուածարեալ իր մեծ պապի
 Մասի համբէն
 Ժիր ու հըլու
 Առնող իր քայլ:

Ծունկի եկած մեծ հսկողի
 Սեղանին հով,
 Մագաղաթին վրայ ոսկի
 Այն օրերուն,
 Կ'ուրուագէր,
 Գաղտնիքն արագ հայ տառերուն:

Ու մայրն անոր Սահականոյ,
 Ի լուր մանկան
 Հրոուողունին զուարթաձայն,
 Արցունքին մէջ
 Ուրախութեան,
 Կը զգար բերկրանքն այն անանուն
 Զոր լոկ մայրեր գիտեն զգալ,
 Զաւկըներուն համար իրենց
 Ապագայի մը կանչուած:

Ու կը թըւէր
Մօրք տեսնել,
Մանկան անվարժ մասներուն տակ
Մագաղաթն այն,
Դասք մը ինչպէս
Անծայրածիր,
Լեռներէ լեռ, հովիտէ հովիտ,
Միակեան
Փռուող, ձգուող,
Եւ գիրքնու շուրջնուն տեղ,
Շարժէր հզօր բանականներու
Հիւսիսներէն ու հարաւէն
Իրար եկող:
Ու նետներու տարափին տակ,
Ամպերու պէս կը գոռային
Զոյգ բանականներ,
Հնոցէն դուրս նետուող, մարող,
Կայծերու պէս,
Կը ջարդուէին զօրականներ,
Եւ ձիերու խիստինքին մէջ
Տխրահնչիւն,
Կը ձայնէին ռազմի փողեր:

Շարժէր հզօր,
Ու մանգաղէն թափալ ինկող
Հասկերու պէս,
Կը հնձուէին
Բիւր հասակներ,
Եւ բոցավարս
Դրօշներու նման կանգուն,
Կը գոռային հրամանաբաշխ
Զօրականներ:
Ու անոնց մէջ
Բոց մը ինչպէս կապուտագիւղ,
Մանուկն վարդան,

Ճերմակ ձիուն վրայ նըսած
Կ'առաջնորդէր գունդերը գոռ
Դէպի դասք մը շուրջնուն:

Շուրջն իր մարդեր,
Մութ, դալկադէմ,
Բըզբֆտուած որաներու
Նըման հիւսուած են իրարու
Թեւ ու նիզակ,
Սուր ու վահան:

Խրոյսապանձ ան կը կենար,
Սաղաւարտով արոյրաւէն,
Զեռֆին՝ սուտերն մեր պատմութեան
Որ կ'աղօսէր բանական անհուն
Թընամփին,
Նըման նաւու ցոռիկին սուր,
Որ կը հեղֆէ ծովն ալեկոծ,
Կուրծֆն իր ըրած
Դալիք մահուան
Մեծ նշանակ:

Յետոյ խաւար, խաղաղարար,
Բայց չարաւուք,
Հովէն զարնուած
Կաղնին ինչպէս
Կը տապալէր մեծ ռազմավարն:

Յուզումը խոր կը բանայ թեւ
Դէմֆին կնոջ,
Ու կը թըռի իր օրֆներէն
Ճիչը խորունկ,
Ապագայի պատկերին դէմ
Մահասարսուտ:

ԵՂԻՎԱՐԴ

